

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ

5 հոկտեմբեր. Գերմանիոյ հիւսիս-արեւելեան քաղաքներէն Հալլը/Չաալըի հայ համայնքը Գերմանիոյ հայոց առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեանի եւ Թեմական Խորհուրդի ատենապետ տոքթ. Սարգիս Քէհեաեանի ստորագրութեամբ ունեցաւ նոր եկեղեցի մը: St. Hedwig անուն կաթողիկէ համայնքին պատկանող այս եկեղեցին գնուեցաւ յանուն տեղւոյն համայնքին, գերմանահայոց առաջնորդութեան կողմէ: Alfred-Reinhardt-Str. 8, 06132 Halle-Ammendorf հասցէին վրայ գտնուող եկեղեցին կրնայ շուրջ երկու հարիւր հոգի պարունակել, իր բակին մէջ ունի երկյարկանի բնակարան մը: Տեղւոյն հայ համայնքը ի մօտոյ պիտի ձեռնարկէ նորոգութեանց եւ Հայ Եկեղեցւոյ աւանդութեանց յատուկ փոփոխութիւններու:

7 հոկտեմբեր. Էթլինկէն քաղաքի Բադիստն հիւրանոցի շքեղ սրահներուն մէջ հանդիսաւոր կերպով տօնուեցաւ Հայ Օգնութեան Միութեան հիմնադրութեան 96-ամեակը: Գերմանիոյ բաժնի ատենապետուհի տիկին Անի Պլտեան-Ֆայլի ու իր ընկերուհիներու տքնաջան աշխատանքով կազմակերպուած ձեռնարկին կմասնակցէին շուրջ 230 ներկաներ:

Հանդիսութեան կը մասնակցէր նաեւ առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Սերովբէ վրդ. Իսախանեանի: Սրբազանը բարձր գնահատելով սրտագին շնորհաւորութիւնները փոխանցեց ՀՕՄ-ի շուրջ մէկ դարու ազնիւ եւ հայանպաստ գործը, մաղթեց, որ նոր սերունդին օրինակ դառնայ միութեան ազնիւ գործունէութիւնը:

20 հոկտեմբեր. Նիւրնպերկի Հեօքսշթաթ-Այշի St. Georg կաթողիկէ եկեղեցւոյ, ինչպէս նաեւ շրջանի քաղաքապետարանի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ խաչքարի մը օրհնութիւնը, որ նուիրուած էր Հայոց 1915-ի Եղեռնի 1,5 միլիոն զոհերուն: Խաչքարը զետեղուած էր քաղաքի Realschule եւ Antom-Volker-Schule-ի միջեւ գտնուող տարածքը, in der Dreifachturnhalle – Rothenburger Strabe փողոցին մէջ:

Նախքան խաչքարի օրհնութիւնը Realschule-ի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ բանախօսութիւն մը տոքթ. Թէսա Հոֆմանի կողմէ, որուն ներկայ էին, բացի վերոնշեալ զոյգ դպրոցներու աշակերտութեան, տեղւոյն քաղաքապետը, կաթողիկէ եկեղեցւոյ վերատեսուչը, ինչպէս նաեւ խումբ մը հայեր Նիւրնպերկի հայ համայնքէն, գլխաւորութեամբ եկեղեցական վարչութեան ատենապետուհի տիկ. Մարգրիտ Ասոյեան/Լինք եւ դպրոցներու ուսուցիչներ եւ հայ համայնքին բարեկամներ: Տոքթ. Թէսա Հոֆման հանգամանօրէն եւ համապարփակ ներկայացուց Հայոց քաղաքական ու եկեղեցական համառօտ պատմութիւնը, ինչպէս նաեւ ցեղասպանութիւնը բազմաթիւ տեսասալիկներով (սլայդներով):

Խաչքարի օրհնութիւնը տեղի ունեցաւ նախագահութեամբ առաջնորդ Սրբազանի, առընթերակայութեամբ Հոգշ. Տ. Արիստակէս աբղ. Այվազեանի ու Բրշ. Լեւոն սրկ. Սարտարեանի:

29 հոկտեմբեր. Պոննի Ռուսական հիւպատոս Ֆյոդոր Կորոկորդինի նախաձեռնութեամբ հիւպատոսարանին մէջ կազմակերպուած էր ընդունելութիւն հանդերձ համերգով մը, ի պատիւ՝ Ռուս Եկեղեցւոյ արտաքին յարաբերութիւններու յանձնախումբի ատենապետ ու Սմոլէնսք Քալինինկրատի Մէթրոփոլիթ Գիրիլի Գերմանիա այցելութեան, ինչպէս նաեւ Գերմանիոյ Ռուս Եկեղեցւոյ առաջնորդ ու Քլինի արքեպիսկոպոս Գերաշնորի Լոնկինի եպիսկոպոսական ձեռնադրութեան 25-ամեայ յոբէ-

լեանին:

Կազմակերպուած ընդունելութեան ու համերգին յանուն Հայ Եկեղեցւոյ ներկայ էր առաջնորդ Սրբազան Հայրը՝ իր կողքին ունենալով Քեօլնի եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Հայազատ քհնյ. Մարտիկեանը:

Սրբազանը յանդիսութեան աւարտին զոյգ Սրբազաններուն փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, ինչպէս նաեւ իր ու Թեմական Խորհուրդի ջերմ ողջոյններն ու շնորհատրանքները, Լոնկին արքեպիսկոպոսին նուիրելով հայ արուեստը ներկայացնող ալպոմ մը:

Գերմանիոյ հայոց Առաջնորդարանը քանի մը տարիներէ ի վեր աւանդութիւն դարձուցած է ամէն տարի կազմակերպել հայկական մշակոյթի շաբաթներ: Այս տարուայ հանդիսութիւնները սկսան 6 նոյեմբերին, Քեօլնի Տօմ Ֆօրում կոչուած հաստատութեան մէջ, կաթողիկէ Մայր տաճարին ճիշդ դիմացը:

Հայ մշակոյթի ի նպաստ կազմակերպուած ծրագրերուն առաջինն էր «Հայաստանի Գարունը» ժապաւենին ցուցադրութիւնը: Ժապաւենը կը ներկայացնէ Հայաստանի ներկան, ինչպէս նաեւ պատմութիւնը հանդերձ ցեղասպանութեան բաժինով եւ պատրաստուած է Հայ-Գերմանական Բարեկամութեան Միութեան նախագահուհի Էլվիրա Բայրի ու գերմանական հեռուստացոյցի առաջին, երկրորդ եւ Արթէ յայտագրերու լուսանկարիչ Վիլֆրիտ Քաութէի նախաձեռնութեամբ:

Հայկական Շաբաթներու բացումը կատարեց Գերմանիոյ հայոց առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Պեքճեան՝ շեշտելով մշակոյթին դերը ժողովուրդի մը կեանքին մէջ, որ կկերտէ անոր նկարագիրն ու կեանքի ընթացքը:

Ժապաւենի ցուցադրութեան ներկայ էին մեծ թվով հայեր ու գերմանացիներ: Յուցադրութեան աւարտին կազմակերպուեցաւ հիւրասիրութիւն:

Մշակոյթի Շաբաթներուն յաջորդ ձեռնարկները տեղի կունենան 18 եւ 24 նոյեմբերին: Առաջինը՝ Մարսելի Գեղամ հայկական երաժշտութեան համոյթի ելոյթով, երկրորդը՝ տոքթ. Բաֆֆի Քանդեանի «Հոն, հեռաւոր Եւրոպայի մէջ» բանաստեղծութիւններով:

15-17 նոյեմբեր. Պեռլին պաշտօնական այցելութիւն մը տուաւ ՀՀ նախագահ Բուպերթ Քոչարեան, որ պաշտօնական հանդիպումներ ունեցաւ Գերմանիոյ վարչապետուհիին, նախագահին եւ պետական մարմիններու տարբեր ներկայացուցիչներու հետ:

Այս առթիւ թեմիս առաջնորդը՝ Գարեգին Սրբազան, իր հետն ունենալով Հոգշ. Հայր Սուրբեր Տ. Սերովբէ վրդ. Բախանեանն ու Տ. Խաչատուր աբղ. Կնեազեանը, ինչպէս նաեւ Պեռլինի Հայ եկեղեցական համայնքի վարչութիւնը՝ գլխաւորութեամբ ատենապետուհի տիկին Սոնա Այբերը, 15 նոյեմբերի երեկոյեան դրօշի օրհնութիւն կատարեց ՀՀ Գերմանիոյ նոր դեսպանատան: Արարողութեան աւարտին ՀՀ Արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանն ու դեսպանուհի տիկին Կարինէ Ղազինեան միասնաբար բարձրացուցին Հայաստանի Հանրապետութեան դրօշը:

18 նոյեմբեր. Գերմանիոյ հայոց Առաջնորդութեան կազմակերպած Հայկական Մշակոյթի Շաբաթներու շրջագծին մէջ Մարսելի Գեղամ համոյթը իսկական երաժշտական տօնախմբութիւն մը կատարեց: Տօմ Ֆօրումի սրահը բերնէ բերան լեցուած էր: Շուրջ երկու ժամ Մարի Էօմէնի Նշանեան, Նուպար Տէր-Մինասեան եւ Կարօ Տէրտէրեան հայկական աւանդական եւ ժամանակակից երաժշտութեան նմոյշները երգեցողութեամբ մեկնաբանեցին, ընկերակցութեամբ հայկական երաժշտական գործիքներու: Համոյթի անդամները երկարատեւ ծափահարուեցան ներկաներու:

կողմէ:

Գեղամ համոյթը յաջորդ օրը նոյն ելոյթը ունեցաւ Ֆրանսֆուրթի մէջ, Հէսէնի հայ համայնքի նախաձեռնութեամբ:

19 նոյեմբեր. Նոյվիտի հայ համայնքը իր հիմնադրութեան 25-ամեակը նշեց արա-րողութեամբ եւ Հայաստանի աղջիկների «ԼՈՅՍ» երգչախումբի համերգով:

Սուրբ Պօնիֆագիոս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած հանդիսութիւններուն ներկայ էին Նոյվիտի գլխաւոր քաղաքապետ Նիքոլաուս Ռոթ, Միջեկեղեցական Խորհուրդի ատենապետ Պատուելի Վերներ Ձուր, քաղաքապետարանի վարչական խորհուրդի անդամներ, կուսակցութիւններու, տարածաշրջանի կառավարական մարմիններու, քոյր Եկեղեցիներու եւ եկեղեցական, մշակութային, ընկերային մարմիններու ու մամլոյ ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ հայ ու գերմանացի հոծ բազմութիւն մը:

Հանդիսութեան բացման խօսքը կատարեց իրաւագէտ տիար Նորայր Պոյաճեան: Ան ներկաներուն ողջունեց յանուն համայնքի վարչութեան: Քաղաքապետը իր շնոր-հաւորական խօսքին մէջ իր ուրախութիւնն արտայայտեց, որ տեղւոյն հայ համայնքը իր աշխոյժ մասնակցութիւնը կը բերէ քաղաքի եկեղեցական եւ մշակութային ծրա-գիրներուն: Ան յայտնեց, որ Նոյվիտի հայ համայնքի ներկայութիւնը հարստութիւն մըն է 350-ամեայ քաղաքին համար եւ մաղթեց, որ յաջորդ տարիներուն ա՛լ աւելի արդիւնաբեր յարաբերութիւններ ըլլան հայ համայնքի եւ քաղաքապետարանին մի-ջեւ:

Պատուելի Վերներ Ձուր եւս շնորհաւորեց համայնքի 25-ամեակը: Ան ընդգծելով Հայ Առաքելական Եկեղեցւոյ պատմական տեղը քրիստոնէութեան պատմութեան մէջ, ուրախութիւն յայտնեց, որ փոքր, բայց կենդանի համայնք մը կը գտնուի Նոյվիտ:

Վերջին խօսքը տրուած էր Ս. Պօնիֆագիոս եկեղեցւոյ հովիւ Նորպէր Քօհնսին: Վարդապետը ուրախութիւն յայտնեց, որ Նոյվիտի համայնքը իր հիմնադրութենէն ի վեր, մի քանի ընդմիջումներով հանդերձ, որպէս հիւր իր կրօնական եւ համայնքային կեանքը կապած է Ս. Պօնիֆագիոս եկեղեցւոյ հետ: Ան շնորհաւորելով տեղի հայ համայնքի 25-ամեակը, նուիրեց մեծ մոմ մը, գեղեցիկ կերպով զարդարուած եւ մա-կագրուած օրուայ յիշատակին համեմատ, իբրեւ նշան երկու համայնքներու սերտ եւ բարեկամական յարաբերութեան:

Ապա ելոյթ ունեցաւ «Լոյս» համոյթը, կատարելով եկեղեցական եւ աշխարհիկ եր-գեր: Համերգէն յետոյ կազմակերպուեցաւ ընդունելութիւն մը համայնքի սրահին մէջ:

Նոյն օրը Պոխում Լինտընի մէջ գտնուող Ս. Քրիստոս գերմանական աւետարա-նական եկեղեցւոյ դրան առջեւ զետեղուեցաւ ու բացումը կատարուեցաւ յուշարձանի մը, որ պատրաստուած էր Հայաստանի մէջ, արուեստագէտ-քանդակագործ Ալպէրթ Վարդանեանի կողմէ: Յուշարձանի բացման ներկայ էին բացի տեղւոյն եկեղեցական դասէն ու հաւատացեալներէն, նաեւ քաղաքապետն ու պետական տարբեր պաշտօ-նեաներ: Հայ Եկեղեցին եւս հրաւիրուած ըլլալով հանդերձ, նոյն օրը եկեղեցական դասը տարբեր հայ համայնքներուն մէջ պաշտօններ ունեցած ըլլալով չէր կրցած մասնակցիլ: Փոխարէն առաջնորդ Սրբազան Հօր ուղարկած շնորհաւորական եւ օրհնութեան գիրը կարդացուեցաւ:

Յիշեալ յուշարձանը պատրաստուած է անագապղինձէ (պրոնզ), ունի շուրջ երկու մէթր բարձրութիւն եւ կը կշռէ մէկ թոնէն աւելի: Ան կը ներկայացնէ տարբեր դարե-րու ընթացքին աշխարհի իրար յաջորդած քաղաքակրթութիւնները, որոնք տարբեր պատճառներով կրած են մարդկային հարուածներ: Բայց հակառակ բոլոր անպատե-հութեանց, կայ նոր յայտնուելիք քաղաքակրթութեան յոյսը, որ կը տեսնուի յուշարձա-նին վրայ զետեղուած փայլուն շրջանակով մը:

Սօտաւորապէս այս գաղափարով յուշարձանի մը պատրաստութիւնը յանձնարարուած է բարերարութեամբ նոյն եկեղեցւոյ հաւատացեալներէն մէկուն կողմէ, որ վերապրած էր անցեալ դարու զոյգ համաշխարհային պատերազմները:

23 նոյեմբեր. Առաջնորդ Սրբազան Հայրն ու Պէտլինի Հայ եկեղեցական համայնքի վարչութեան անդամները ներկայ գտնուեցան Արցախի ժողովուրդի Բարեկամներու Միութեան թատերական մէկ ելոյթին:

Խաղը կը կոչուէր «Վերջին մտածումի հեքեաթը», որ գրի առնուած է Էտկար Հիլ-զընթաթի կողմէ: Որպէս գիրք հրատարակուած այս խաղը մեզ կառաջնորդէ հայ ժողովուրդի ապրելակերպին ու հետքերուն:

24 նոյեմբերին Գերմանահայոց Առաջնորդութեան Մշակոյթի Շաբաթներու ծիրէն ներս դարձեալ Տօմ Ֆօրումի սրահին մէջ «Հոն, հեռաւոր Եւրոպայի մէջ» խորագրով գրական երեկոյ մը կազմակերպուած էր, որու ընթացքին հայ արձակն ու չափածոն իւրահատուկ կերպով կուղեկցէին հայոց պատմութեան: Ձեռնարկը պատեհ առիթ մը հանդիսացաւ Րաֆֆի Քէլապաճեան Քանդեանին ծաղկաքաղ մը ներկայացնելու: Մայրենի լեզուին միացան նաեւ տոտութի հնչիւնները: Գրական այս երեկոյթին ողջոյնի խօսք ըսին Սերովբէ Օտապաշեանն ու Ճորճ Պավայը:

Համալուրկի Լուրերական Բողոքական Եկեղեցւոյ նախաձեռնութեամբ նոյեմբեր ամսու երեք շաբաթները նուիրուած էին Միջին Արեւելքի, բայց գերմանաբնակ տարբեր էրնիք ու կրօնական համայնքներուն, որոնք այս ժամանակամիջոցին իրենց մշակութային ծրագրերով ելոյթներ ունեցան:

Այս ծրագրին մաս կազմող բաժին մը տեղի ունեցաւ 24 նոյեմբերին Ղպտի եկեղեցւոյ մէջ, ուր Հայ Եկեղեցւոյ կողմէ մշակուած գիշերային ժամերգութիւն մը տեղի ունեցաւ: Արարողութիւնը կատարուեցաւ առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Պեքճեանի նախագահութեամբ, որուն հետ մասնակից էին՝ շրջանի հովիւ Տ. Խաչատուր արք. Կնեազեան, Ղպտի Եկեղեցւոյ առաջնորդ Ամպա Տամեան ու Եթովպական Եկեղեցւոյ առաջնորդ Տ. Մէրավի քինյ. Թէպէկէ: Իսկ Ուղղափառ Եկեղեցին մասնակցած էր իր երգչախումբով: Արարողութիւնը Միջին Արեւելքի համար խաղաղութեան աղօթքի բնոյթ կը կրէր, որ իրագործուեցաւ հայերէն ու գերմաներէն լեզուներով, բոլոր եկեղեցականներու մասնակցութեամբ ու միջեկեղեցական հանգամանքով:

Իսկ յիշեալ մշակոյթի շաբաթները կը հովանաւորուէին Համալուրկի մշակոյթի սէնսթորուիին եւ Եպիսկոպոսուի Մարիա Եւփսընի կողմէ:

ՊԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ